# ՀԱՆԳԻՍՏ
# ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ Տ. ԱՇՈՏ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

Օգոստոսի 9-ին, 70 տարեկան հասակում, երկարատև հիվանդությունից հետո, Անգլիայի Մանչեստր քաղաքում ի Տեր հանգյավ Մանչեստրի հայ գաղութի հոգևոր հովիվ արժ. տ. Աշոտ ավագ քհն. Տեր-Հարությունյանը:

Հանգուցյալը, ավազանի անունով Սրապիոն, ծնվել է 1905 թ. Կիլիկիայի Քիլիս քաղաքում, դեղագործի ընտանիքում:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կորցնում է իր հարազատներին և 1919 թվականին հաստատվում Հալեպ քաղաքում:

1919—1923 թթ. ավարտելով Ճյունիի (Լիբանան) անգլիական որբանոցի դասընթացը, Հալեպում սովորում է Ֆրեր Մարիստների քոլեջում և ապա, որպես ազատ ունկնդիր, հետևում կրոնական առարկաների դասավանդմանը Անթիլիասի դպրեվանքում:

1949 թ. դեկտեմբերի 4-ին ձեռնադրվում է քահանա՝ վերանվանվելով տ. Աշոտ:

Տ. Աշոտ քահանան 1952 թ. մինչև իր մահը, շուրջ 25 տարիներ, ժրաջանությամբ և նվիրումով հովվում էր Մանչեստրի հայ գաղութը՝ արժանանալով իր ժողովրդի սիրուն և հարգանքին:

Հանգուցյալն իր ազգօգուտ և եկեղեցանվեր ծառայության համար Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի կողմից 1956 թ. պարգևատրվել է լանջախաչով, իսկ 1963 թ.՝ ավագության պատվով:

Օգոստոսի 14-ին Մանչեստրի հայոց ս. Երրորդություն եկեղեցում տեղի է ունենում հանգուցյալի վերջին օծման կարգը:

Պատարագում է տ. Հայկազուն աբեղա Նաջարյանը:

Վերջին օծման կարգը կատարում է Անգլիայի հայոց հայրապետական պատվիրակ և Լոնդոնի հայոց հոգևոր տեսուչ տ. Ներսես եպս. Պոզապալյանը և որից հետո մի հուզիչ դամբանական խոսում՝ «Եկի ի Հօրէ և երթամ առ Հայր իմ» բնաբանով՝ շեշտելով հանգուցյալի անմոռանալի ծառայություններն իր ժողովրդին և եկեղեցուն:

Հանգուցյալի աճյունն ամփոփվում է Մանչեստրի հասարակաց գերեզմանատանը, ուր, հանուն տեղի եկեղեցական վարչության, հարգանքի և երախտագիտության ջերմ խոսք է ասում Ժիրայր Ազիրյանը:

«Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի. ամէն»:

ՀԱՅԿ ՄՍՐ ԳՐԱԴԻՐՔՈՒՆԵՐԻ ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅԱՆ